

ՁԻՒՆ 09.06.2017,
Կայ: 11814225



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

<20> *Մայիսի* 2017թ. N *229* -Ն

ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի N 16 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել հայտերի գրանցամատյանի.
 - 1) ձևը՝ համաձայն հավելված N 1-ի:
 - 2) վարման կարգը՝ համաձայն հավելված N 2-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2001 թվականի հունվարի 17-ի «Մրցույթի հայտերի գրանցամատյանի ձևը և վարման կարգը հաստատելու մասին» N 16 հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԱՐԱՄՅԱՆ

Հաստատված է
--- ----- 20 -- թ.-ին
Ընդամենը՝ ---- էջ

Կ. Տ

Գ Ր Ա Ն Ց Ա Մ Ա Տ Յ Ա Ն

Հ Ա Յ Տ Ե Ր Ի

Պատվիրատուի անվանումը՝

Գնման ընթացակարգի
ծածկագիրը՝

Գնահատող հանձնաժողովի
քարտուղար՝

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

Էջ N

ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ

h/h	Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)	Մասնակցի՝ այն գրության ելից և պատվիրատուի նույն գրության մտից համարները և ամսաթիվերը, որով ներկայացվել է հայտը (Հայտը առձեռն ներկայացված լինելու դեպքում՝ այն ներկայացնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը)	Հայտերի ստացման		Հայտը գրանցողի ստորագրությունը	Նշագրումներ
			ամիսը, ամսաթիվը	Ժամը		
1	2	3	4	5	6	7

Էջ N ---

Կ Ա Ր Գ

ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հայտերի գրանցամատյանի վարման հետ կապված հարաբերությունները:

II. ՀԱՅՏԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2. Փաստաթղթային եղանակով գնումներ կատարելու յուրաքանչյուր ընթացակարգի համար, բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով սահմանված հիմքերով գնումներ կատարելու դեպքերի, պատվիրատուն վարում է հայտերի առանձին գրանցամատյան (այսուհետև՝ գրանցամատյան):

3. Ներկայացված հայտերն ընդունում և գրանցամատյանում գրանցում է գնահատող հանձնաժողովի քարտուղարը (այսուհետև՝ քարտուղար):

4. Գրանցամատյանի էջերը համարակալվում, կարվում, ստորագրվում են քարտուղարի կողմից: Նախատրակավորման հայտարարության կամ հրավերի հաստատման օրը գրանցամատյանի առաջին էջի վրա դրվում է պատվիրատուի կնիքը և քարտուղարի ստորագրությունը, գրվում է գրանցամատյանի էջերի քանակը:

5. Գրանցամատյանում գրառումները կատարվում են թանաքով, ջնջումներ և քերվածքներ կատարել չի թույլատրվում, ուղղումները կատարվում են միայն քարտուղարի կողմից: Գրանցամատյանում ուղղումներ կատարելու դեպքում՝ գրանցամատյանի «Նշագրումներ» սյունակում դրվում է քարտուղարի ստորագրությունը: Մինչև սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի լուծարումը, գրանցամատյանի անվնաս պահպանման համար պատասխանատու է քարտուղարը:

6. Հայտ պարունակող ծրարի վրա, գրանցամատյանի վարման պատասխանատուն նշում է գրանցամատյանում տվյալ ծրարի գրանցման համարը, գրանցման օրը և ժամը՝ ստորագրում ծրագրի վրա իր կողմից կատարված գրառումների տակ:

7. Հայտ ներկայացրած անձի պահանջով՝ նման պահանջ ներկայացվելու օրվա ընթացքում, պատվիրատուն վերջինիս տալիս է տեղեկանք՝ համաձայն N 1 ձևի՝

ներկայացված հայտի գրանցման մասին: Քարտուղարը տեղեկանքը կազմում և ստորագրում է երկու օրինակից: Տեղեկանքի երկու օրինակները կնքվում են պատվիրատուի կնիքով, մեկ օրինակը տրվում է տեղեկանք ստանալու պահանջ ներկայացրած անձին, մյուս օրինակը կցվում է գրանցամատյանին, որպես դրա անբաժանելի մաս:

8. Գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող տեղեկանքները կցվում են գնումների ընթացակարգի արձանագրությանը և հանդիսանում դրա անբաժանելի մասը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N ___

ՀԱՅՏԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<p>Պատվիրատուի անվանումը՝ _____</p> <p>Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ _____</p> <p>Գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ _____</p>	<p>_____</p> <p>_____</p> <p>_____</p> <p>(անուն, ազգանուն) (ստորագրություն)</p>
<p>Տեղեկանքը տրվում է՝ _____</p>	<p>(տեղեկանք ստանալու պահանջ ներկայացրած անձի անվանումը, (անուն, ազգանուն) (Տեղեկանքը առձեռն ստացողի անձը հաստատող փաստաթղթի անունը և համարը)</p>

Սույնով հայտնվում է, որ վերը նշված ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով _____ -ի անունից ներկայացվել է հայտ

մասնակցի անվանումը (անունը, ազգանունը)

պարունակող ծրար, որը գրանցվել է գրանցամատյանում:

Հայտի գրանցման տվյալներն են՝

Ընդունման և գրանցման՝ _____
(ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը)

Հայտի գրանցման հերթական համարը՝ _____

Սույն տեղեկանքը կազմվել է երկու օրինակից՝ -----20 -- թվականին: